ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

ԱՌԱՐԿԱ՝ Մայրենի

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Լուսինե Հմայակի Զաքարյան (դասվար)

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ Ասյա Արազբեկի Սարգսյան

ԻՋԵՎԱՆ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ 1: Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը 5

1.1 Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում 5

1.2 Գեղարվեստական ստեղծագործությունները Մայրենիի դասավանդման ընթացքում 7

Գլուխ 2: Ճանաչողական գործընթացների խանգարումները սովորորդների ուսումնառության ընթացքում 13

2.1 Գրի և ընթերցանության խանգարումները մայրենիի դասավանդման ընթացքում 13

2.2 Վայելչագրության ուսուցման առանձնահատկությունները մայրենիի դասավանդման ընթացքում 14

Եզրակացություն 17

Առաջարկություններ 18

Օգտագործված գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհի ապագան իմ դասարանում է այսօր»:

Իվան Վելթոն Ֆիթզվոթեր

Ուսուցչի աշխատանքի հաջողության ամենակարևոր գրավականը երեխային սիրելն է ու նվիրվելը սեփական կոչմանը: Հարկավոր է միշտ հիշել, որ երեխային պետք է ընդունել իր բոլոր թերություններով հանդերձ, այնպիսին, ինչպիսին նա կա: Անհրաժեշտ է նկատել և խրախուսել երեխայի յուրաքանչյուր փոքրիկ առաջընթացը:
Յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի հարստացմանը:

Ինչպես գիտենք, կրթության կազմակերպիչների՝ ուսուցիչներիս առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների կրթական կարիքների բացահայտումն է: Ուսուցիչը պետք է իմանա կրթության կարիքներ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունների, նրանց կարողությունների, հմտությունների, դժվարությունների, ուսուցման համար անհրաժեշտ միջավայրային հարմարեցումների և կրթության կազմակերպման գործընթացում հաջողության հասնելու ուղիների և արդյունավետ եղանակների մասին:

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենիի դասավանդման ընթացքում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Ընթերցանության շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը, գտնում է սեփական հարցերի պատասխանները, բավարարում է բազմակողմանի հետաքրքրությունները, նկատում և ընկալում է գեղեցիկը, դատապարտում է բացասական երևույթները:
Ընթերցանությունը նպատակ չունի լեզվական խնդիրներ լուծելու, այն պետք է վերաբերի զուտ բնագրին՝ դրա բովանդակության յուրացմանը:

Թեմայի կարևորությունը և արդիականությունը: Ակնհայտ է, որ կրթական բնագավառի զարգացմանը զուգահեռ առաջանում եմ նոր կրթական կարիքներ և մեր՝

ուսուցիչներիս համար կարևոր է դառնում դրանց բացահայտումը և կրթական կարիքների բավարարման ուղիների մշակումը, որը նպաստում է կրթական հետաքրքրությունների և նպատակների ձևավորմանը, դառնում է շարժիչ ուժ, մոտիվացիոն մեխանիզմ, որը դրդում է աշակերտին ավելի մեծ ոգևորվածությամբ մասնակցել դասին։

Կրթական կարիքները մայրենիի դասավանդման շրջանակում բացահայտելուց և ազդեցությունը ուսումնառության վրա պարզելուց հետո, ուսուցչի համար կարևոր է դառնում դասընթացի ճիշտ և գրագետ կազմակերպումը, որը պետք է հիմնված լինի կարիքների բավարման ուղիների մշակման վրա։

Նպատակ։ Հետազոտական աշխատանքի նպատակն է դիտարկել մայրենիի դասվանդման ընթացքում նկատված կրթական կարիքներ ունեցող երեխաների ուսումնառության կազմակերպումը։

Խնդիրներ։ Սույն նպատակին հասնելու համար կարևոր է իրականացնել հետևյալ խնդիրները.

1. Խթանելով սովորողների մտածողությունը՝ ուշադրությունը կենտրոնացնել ինքնուրույն ընթերցանության զարգացմանը։
2. Տեքստի իմաստի ընկալմամբ՝ կարդալու և վերլուծելու հմտություններ մշակել։
3. Ըմբռնածը կիրառել՝ ըստ կարողության և օժտվածության։
4. Վայելուչ և գեղեցիկ գրելու կարողություն մշակել։

Գլուխ 1: Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

1.1 Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում

«Լեզուն անշունչ, ամենաազնիվ գործիքն է, որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, որի ո՛չ անհատը, ո՛չ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ իր մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ հաջորդ սերունդներին»։

Խ. Աբովյան

Մայրենի լեզվի հմայքն զգալու համար խիստ կարևոր է արտահայտիչ ընթերցանությունը։ Այդ ուղղությամբ երեխաներին պետք է վարժեցնել առաջին դասարանից։ Ուսուցիչը պետք է ուշադրությունը կենտրոնացնի ոչ միայն տառուսուցման վրա, այլև այն զուգակցի արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի զարգացման բազմազան աշխատանքների հետ։

«Արտահայտչականությունը լավ կարդալու հիմնական ու իր կատարելությամբ ամենաբարձր առանձնահատկությունն է, առանց դրա կարդալը կատարյալ համարվել չի կարող»։

Ա. Ե. Տեր-Գրիգորյան

Մշակելով երեխայի արտահայտիչ ընթերցանությունը՝ նրան հավաստիացնում ենք , որ գեղեցիկ ընթերցելն արվեստ է՝ ինչպես գեղեցիկ երգը, որը հիացնում է մարդկանց և լսվում հաճույքով։ Այն ձևավորում է գրական ճաշակ, բարձրացնում լեզվական մշակույթը, ազդում սրտի և զգացմունքների վրա, նպաստում մտածողության զարգացմանը, հարստացնում գիտելիքները։

«…Յուրաքանչյուր շեշտ և կետ զանգակի պես հնչում է երեխայի ականջին, հոգեբուխ երգի նման թափանցում մարդկային հոգու խորքերը, թրթռացնում բոլոր նուրբ լարերը նրա մոտ»։

Ղ. Աղայան

Քանի որ տարրական դասարաններում արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում ընկած է առաջին հերթին կետադրական նշանների ընբռնումը և ընթերցանության գիտակցականությունը։ Սովորողը պետք է զգա առոգանության ու

տրոհության նշաններին առնչվող դադարների ու հնչերանգի, ինչպես նաև բնագրի բովանդակությունից բխող տեմպի ու ձայնի ելևէջների փոփոխությունը: Արտահայտիչ ընթերցանությանը նպաստում են ձայնագրված արտահայտիչ ընթերցումների ունկնդրումը, որոնք համապատասխանում են տարրական դասարանների ծրագրերին և չափորոշչային պահանջներին: Մանկան բանարվեստի օգտագործումը ուսումնական գործընթացում բարձրացնում է երեխաների հետաքրքրությունը դասի նկատմամբ, նպաստում նրանց ակտիվացմանը, բառապաշարի հարստացմանը և բանավոր ու գրական խոսքի զարգացմանը:

Խոսքը դրսևորվում է երկու ձևով՝ բանավոր և գրավոր: Դրանք փոխադարձ կապակցության մեջ են և ունեն իրենց առանձնահատկությունները: Բանավոր խոսքն ուղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խոսողն ազատ է բառերի ընտրության մեջ, կարող է թերի արտահայտել որոշ մտքեր, ինչը չի խանգարում խոսքի հասկացմանը: Աշակերտի խոսքի զարգացման աշխատանքները ճիշտ կազմակերպելու առումով էական նշանակություն ունեն համապատասխան մեթոդի ընտրությունը և տեղին օգտագործումը: Խոսքի զարգացման մեթոդները բազմազան են.

1. **Բացատրական-ցուցադրական** մեթոդը նպաստում է աշակերտների գիտելիքների ձևավորմանը:
2. **Վերարտադրական** մեթոդին բնորոշ է տեսածի, լսածի, սովորածի վերարտադրումը:
3. **Խնդրահարույց շարադրանքի** մեթոդի էությունն այն է, որ ուսուցիչն ինքն է խնդիրներ առաջադրում աշակերտներին՝ խթանելով նրանց ինքնուրույնությունը:
4. **Մասնավոր որոնողական կամ Էվրիստիկական** մեթոդն աշակերտին օգնում է որոնել, զննել, գտնել երևույթների նմանություններն ու տարբերությունները, գիտակցել սխալը և գտնել դրանց վերացման միջոցները:
5. **Հետազոտական** մեթոդի համար էական են փաստերի դիտումը, ուսումնասիրումը, երևույթների և օրինաչափությունների բացահայտումը:
6. **Միջնորդավորված** մեթոդները կիրառվում են այնպիսի օբյեկտներին և երևույթներին ծանոթանալիս, որոնք հնարավոր չէ անմիջականորեն ուսումնասիրել:

7. **Գործնական** մեթոդները նպատակադրված են խոսքային ունակությունների և կարողությունների գործնական կիրառմանը և կատարելագործմանը։

Այսպես՝սովորողները սովորաբար դժվարանում են չափածո ստեղծագործություններն արձակ վերարտադրելիս երկխոսություններով հարուստ նյութը երրորդ դեմքով պատմելիս։ Ուսուցման արդյունավետությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք չափածո ստեղծագործության յուրաքանչյուր քառատողից առանձնացնել հատվածի հիմնական միտքն արտահայտող բառերն ու բառակապակցությունները և դրանցով կազմել նախադասություններ։ Երբեմն էլ քառատողի բովանդակությունն արտահայտում ենք արձակ պատմողական նախադասություններով՝ օգտագործելով հոմանիշներ, փոխելով շարադասությունը։ Բանավոր խոսքի զարգացման, բառապաշարի հարստացմանն է ծառայում հոմանիշների ուսուցումը։

1. 2.Գեղարվեստական ստեղծագործությունները Մայրենիի դասավանդման ընթացքում

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում է նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական և կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն։ Այդ աշխատանքը իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում, այսինքն՝ ուսուցմանը զուգընթաց և արտադասարանային ընթերցանության միջոցով։

Ինքնուրույն ընթերցանության եզրույթն առաջին հերթին նշանակում է ոչ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից։ Հենց դա երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը։

Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը։ Ինչ խոսք, իր յուրահատուկ ստեղծագործություններով սովորողի համար այն մի ուրույն աշխարհ է։ Սակայն գաղտնիք չէ, երեխայի համար կարդալը մեծ

մասամբ հաճելի զբաղմունք չէ: Այն աշխատարար գործընթաց է, Ընդ որում, անհրաժեշտ է առանձնացնել ընթերցանության երկու տեսակ՝ ընթերցանությունը որպես տառերի վերակոդավորում և ընթերցանությունը՝ որպես տեղեկատվության ընկալման հնարավորություն:

Այս երկու ուղղություններից անհնար և անիմաստ է մեկի իրականացումը առանց մյուսի: Իսկ դա դեռևս նոր կարդալ սովորող կրտսեր դպրոցականի համար այնքան էլ դյուրընթաց առաջադրանք չէ: Սկզբում նա հիշում է բառերը: Բնագիրը տեսնում է ոչ թե տառերի կամ վանկերի, այլ բառերի տեսքով: Ապա աստիճանաբար խորանում է մայրենիի աշխարհում, ինչն էլ նպաստում է անցնել վարժ , սահուն ընթերցանությանը: Եվ բազմաթիվ վարժությունների վրա հիմնված աշխատանքը տալիս է իր պտուղները, երեխան յուրացնում է դասագիրքը և սկսում հասկանալ կարդացածը: Արդեն ժամանակն է անցնել ինքնուրույն ընթերցանության:

Դրա համար առաջին հերթին հարկավոր է երեխայի հոգում արթնացնել սեր գրքի և ընթերցանության նկատմամբ, ձգտել, որպեսզի գիրք ընթերցելը նրա համար դառնա իսկական հոգեկան պահանջ: Որքան վաղ է երեխան սկսում կարդալ, այնքան ավելի շուտ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհը և նպաստում ընթերցողական կարողությունների կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը և լեզվական ունակությունների զարգացմանը: Առանց դրանց թերի կմնա անհատի ինքնակրթությունը:

Մայրենիի դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր ենք արթնացնում մեր ժողովրդի և հայրենիքի հանդեպ, նրանց հաղորդակից դարձնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը:

Ինքնուրույն ընթերցանություն կոչված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները: Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքներ: Հենց դրա միջոցով է իրականանում մեր սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին:

Ցավոք, մեր աշակերտության մեջ զգալի թիվ են կազմում գեղարվեստական գրականության նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չունեցող երեխաները: Դեռևս ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելը անհրաժեշտություն էր:

Այսօր պատկերը բոլորովին այլ է:

Աշակերտների մի մասը ընթերցանության նկատմամբ անտարբերությունը պետք է բացատրել նաև տեղեկատվության աղբյուրների առատությամբ:

Յուրաքանչյուրին անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական ունակությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում: Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ: Այսօր գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստացույցը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Ի՞նչպես սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը: Բանն այն է, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում և ազդում մարդու մտավոր զարգացման վրա:

Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը: Իսկ ավելի դժվար է ձևավորել իսկական ընթերցող:

Յուրաքանչյուր ընթերցանության կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը: Իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտների մեջ ինքնուրույն ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: Սակայն ուսուցիչն ինչպես երեխային օգնում է դառնալ ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բավական է պարտադրանքն այդ ուղղությամբ:

Ինքնուրույն ընթերցանությունը լայն հնարավորություն է ընձեռում սովորողի ճանաչողական գործընթացի զարգացման գրքի նկատմամբ հետաքրքրության դաստիարակության գործում: Թեման ուսումնասիրելով երեխան ինքնաբերաբար մտնում

է ընթերցանության դաշտ և կապվում գրքին: Միայն կարդալ սովորեցնելը քիչ է: Ինչպես Ուշինսկին էր ասում. «Կարդալը դեռ ոչինչ չի նշանակում»: Ի՞նչ և ի՞նչպես կարդալ, սա է հարցի էությունը:

Ինքնուրույն ընթերցանության խնդիրներն են.

- ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և զարգացում,
- ընթերցասիրության սահմանում,
- գեղարվեստական գրքեր ընտրելու, կարդալու, վերլուծելու կարողության զարգացում,
- ձեռք բերած գիտելիքների ընդլայնում և խորացում,
- սովորողների հետաքրքրասիրությունների ձևավորում,
- սովորողների ճանաչողական գիտելիքների ձեռքբերում և այլն:

Ինքնուրույն ընթերցանության արձակ և չափածո ստեղծագործությունները ոչ թե կրկնում են մայրենիի դասերին անցած նյութերը, այլ համալրում և հարստացնում գիտելիքները:

Կարդալով գրքում զետեղված հետաքրքրաշարժ պատմությունները և հեքիաթները, առակներն ու բանաստեղծությունները՝ երեխան կհանդիպի տարբեր հերոսների՝ մարդկանց և կենդանիների, կիմանա նրաց լավ ու վատ արարքների մասին, ձեռք կբերի բազում գիտելիքներ: Նյութը ընթերցելուց և վերլուծելուց հետո, աշխատանքի հսկողությունը և կողմնորոշումը իրականացվում է դասարանում՝ ուսուցչի ղեկավարությամբ և ընկերների օգնությամբ՝ «Խմբային աշխատանքի» հարցերի քննարկման եղանակով:

Աշակերտները կարող են այդ աշխատանքները կատարել բանավոր, գրավոր, անհատապես, ենթախմբերով, ամբողջ դասարանով՝ վերջում կատարելով համապատասխան ընդհանրացումներ: Ստեղծագործության գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որպեսզի դասի ընթացքում նրանք.

- խորհեն ընթերցածի շուրջ
- ապրումակցեն հերոսներին

- գնահատեն նրանց արարքները
- իմաստավորեն նրանց խնդիրները
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արժեքները

Երեխաների մեջ մեծ հետաքրքրություն և ակտիվություն է առաջանում, երբ դասանյութը վեր է ածվում երկխոսության կամ դերային խաղերի: Դրանք կարող են լինել շատ պարզ:

Դասարանը բաժանվում է խմբերի և ուսուցիչն առաջադրում է .
«Ով ավելի շատ կհիշի, կմտածի, տեքստում կգտնի… և այլն»: Առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը, եթե գիտելիքների կրկնությունը կամ տեքստի վերարտադրումն իրականացվեն «Բարձունքի նվաճումը» խաղի տեսքով: Գրատախտակի մոտ են հրավիրում թիմերի ներկայացուցիչները, որոնք ճիշտ պատասխանելով տրված հարցերին, բարձրանում է բուրգի աստիճաններով: Այն նկարված է գրատախտակին:

Դերային խաղերի ընթացքում պահանջվում է դերային կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի կերպարի մեջ: Ամենաարդյունավետ խաղի տեսակ է ամենահսկական թատերական ներկայացումը, որտեղ ևս տեղի է ունենում դերային կերպարանափոխություն: Ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ:

Երեխաները հետաքրքրասեր են և ստեղծագործող,և հենց ստեղծագործական աշխատանքի ընթացքում է ձևավորվում անձը: Բոլոր երեխաներին հնարավոր չէ սովորեցնել, օրինակ, գրել բանաստեղծություններ, սակայն կարելի է նրանց սովորեցնել կառուցել չափածո խոսք, արտահայտել իրենց զգացմունքները և «նկարել» բառերով արտահայտված պատկերներ, որոնք կլինեն իրենց երևակայության արդյունքը:
Կարդալու կարողությունները բնութագրվում են հետևյալ որակներով՝ ճիշտ, սահուն, հասկանալով և արտահայտիչ ընթերցանություն: Հայտնի է, որ սովորողի կարդալու

կարողությամբ են անմիջականորեն պայմանավորվում մյուս բոլոր առարկաների ուսումնառության արդյունավետությունը։

Ուսուցչի հիմնական գործառույթը սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կառավարումն է, նրանց ուսումնառության ընթացքում կարիքների բացահայտումը։ Սովորողների մտավոր գործունեության կազմակերպման հարցում շերտավորումն արդյունավետության տեսակետից ենթադրում է տարաբնույթ աշխատանքներ, որոնք հնարավորություն կտան ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալել ՝ անաչառ գնահատելով սեփական ուժերն ու կարողությունները։ Ուսուցիչն ինքը պետք է ընտրի սովորողի ինքնուրույն գործունեության համար առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով սովորողի անհատական առանձնահատկություններից։

Գլուխ 2: Ճանաչողական գործընթացների խանգարումները սովորորողների ուսումնառության ընթացքում

2.1.Գրի և ընթերցանության խանգարումները մայրենիի դասավանդման ընթացքում

«Մենք պետք է ձգտենք ոչ թե նրան, որ բոլորը մեզ հասկանան, այլ նրան, որ մեզ չհասկանալն ուղղակի անհնար լինի»։

Վերգիլիոս

Վերջին տարիներին դպրոցական համակարգում մեծ մտահոգություն է առաջացնում հատկապես գրի և ընթերցանության խանգարումներ ունեցող երեխաների կրթության կազմակերպման հարցը։ Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների մոտ գրի և ընթերցանության խանգարումներն առավել հաճախ են հանդիպում։ Գիրը և ընթերցանությունը բարդ ֆիզիկական գործընթացներ են , որոնք համակարգում են մի շարք վերլուծիչներ՝ խոսքաշարժական, խոսքալսողական և լսողական։

Գրի և ընթերցանության խանգարումներ ունեցող սովորողը դժվարանում է՝

- ճիշտ կատարել գրավոր աշխատանքները, գրավոր խոսքում առկա են արտասանական սխալներ,
- ճիշտ գրել կամ կարդալ արտաբերմամբ կամ գրությամբ նման հնչյունները և տառերը,
- գրել բառերի հոդերը.նկատվում են **ը** և **ն** հոդերի բացթողումներ,
- գրել բառերի վերջավորությունները,
- ընթերցել. ընթերցում է տառերով,
- կատարել վանկային և բառակազմական աշխատանքներ,
- հասկանալ կարդացածի իմաստը. չի կարողանում նույնացնել կարդացած բառն իրական առարկայի անվանման հետ,
- համաչափ գրել և այլն։

Գրի և ընթերցանության խանգարումներ ունեցող սովորողների կրթության մատչելիությունն ու հասանելիությունն ապահովելու համար առաջարկվում է հետևյալ ռազմավարությունները՝

- խրախուսել սովորողի ամենափոքրիկ ձեռքբերումները, հաջողություններն ու նախաձեռնողականությունը,
- ապահովել հետաքրքրությունն ուսուցանվող նյութի նկատմամբ,
- կազմել աշխատանքային պլան՝ ներառելով հստակ քայլեր և գործողություններ,
- հանձնարարել խաղալ սեղանի և ժամանցային խաղեր,
- թույլ տալ գրավոր աշխատանքը կատարել մատիտով կամ ջնջվող գրիչով,
- օգտագործել տեսողական թելադրությունների մեթոդը (Ի. Տ. Ֆեդորենկո)։

2.2 Վայելչագրության ուսուցման առանձնահատկությունները մայրենիի դասավանդման ընթացքում

Աշակերտին վարժեցնելով գրել կոկիկ և հստակ՝ նրա մեջ ձևավորում ենք հոգատար վերաբերմունք , պատասխանատվություն, ջանասիրություն ոչ միայն տվյալ աշխատանքի նկատմամբ, այլև ցանկացած պարտականության պարագայում։ Վայելուչ ձեռագիրը նաև հարգանք է ընթերցողի հանդեպ։

Գրուսուցման գերխնդիրներից է սովորողների մեջ ձևավորել ձեռագրի գրաֆիկական ճշտություն և հստակություն, ինչպես նաև արագագրություն։ Այդ ուղղությամբ տարվող աշխատանքներն սկսվում են երեխայի դպրոց ընդունվելու առաջին իսկ օրվանից՝ գրաճանաչությանը զուգընթաց։

Ձեռագիրը գրելու հաստատուն ձև է, որը՝ որպես ավտոմատացված կարողություն, կազմավորվում ու ամրակայվում է գրելու գործողությունների համակարգում։ Այն ենթադադրում է մարդու կողմից անհրաժեշտ գործողությունների գիտակցված, հաստատուն և անհատական կատարում, որի ընթացքում կարևոր դեր են խաղում երեխայի մանր շարժողականության (մոտորիկայի) զարգացման աստիճանը, գրողի աջլիկ կամ ձախլիկ լինելու հանգամանքը, գրի աջակողմյան կամ ձախակողմյան ուղղությունը և մի շարք այլ գործոններ։

Գրության ընթացքը, բարդ հոգեբանական և ֆիզիոլոգիական գործընթաց է, որին մասնակցում են գլխուղեղի գրեթե բոլոր բաժինները՝ տեսողության, լսողության օրգանները, մարմնի շատ մկաններ։

Գրուսուցման գործընթացը կազմակերպելիս պետք է հստակ պատկերացնել, թե ինչպիսին պետք է լինի գեղեցիկ ձեռագիրը։ Գեղեցիկ ձեռագիրն ունի հստակ, համաչափ և ընթեռնելի տեսք։ Պահպանված են տառի հիմնական ձևերը, չկան ավելորդ գծեր։

Հաշվի առնելով վեց տարեկան երեխաների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ գրուսուցման փուլում շտապողականությունը կարող է խաթարել կայուն և գեղեցիկ ձեռագրի ձևավորմանը, ինչպես նաև ազդել երեխայի ներաշխարհի վրա։ Ուսման առաջին երկու տարում իշխում է դանդաղ գրությունը, որն սկսում է արագանալ երրորդում։ Սովորողի կատարած աշխատանքի որակը բարձրացման ուղղությամբ հարկավոր է հոգեբանական ներգործություն ապահովել, ցանկալի է դասարանում կազմակերպել գեղեցիկ ձեռագրերի մրցույթներ, ստեղծել գեղեցիկ ձեռագրի անկյուն։ Յուրաքանչյուր դասի ժամանակ պետք է անդրադառնալ լավագույն ձեռագրին, ինչպես նաև վերլուծաշտկողական աշխատանք տանել անհամաչափ ձեռագրերի վերափոխման ուղղությամբ։

- Սկսել աշխատանքը նախշերի կատարումից՝ մեծից փոքր հաջորդականությամբ։
- Կետագծերի օգնությամբ մասնիկների գրում։
- Կետագծերի օգնությամբ տառերի գրում։
- Ձեռքն առանց տողից անջատելու գրելու վարժանքներ։
- Օվալաձև մասնիկների գրուսուցում. սովորաբար նրանք շրջանաձև են գրում։
- Սովորողի հետ նրա կատարած աշխատանքի վերլուծում և սխալների պարզաբանում։

Վայելչագրական կարողությունների համաչափ զարգացման համար անհրաժեշտ է խելամտորեն կիրառել բազմաբնույթ գրավոր աշխատանքներ։

Խիստ կարևոր է գրուսուցման ընթացքում սովորողի առաջատար ձեռքի ընտությունը, և ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ առաջատար ձեռքի ընտրությունը։ Հաշվի առնելով գրուսուցման ընթացքում ձախլիկ երեխային հանդիպող դժվարություններն ու

խնդիրները՝ պետք է վերանայենք ձախլիկ երեխայի գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները։ Եթե երեխային չի հաջողվում գեղեցիկ գրել, ապա պետք է վերապահումով և մեղմ մոտենալ այդ խնդրին, չշտապեցնել նրան և չհանգեցնել բազմաթիվ բացթողումների, ինչն, անշուշտ, բացասաբար կանդրադառնա գրավոր աշխատանքի գնահատման արդյունքի վրա։

Ուստի անհրաժեշտ է առավել լրջորեն մոտենալ ձախլիկ երեխաների հարմարման հիմնախնդրին և հնարավորինս շատ հարմարավետություն ապահովել նրանց համար։

Եզրակացություն

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության սոփական փորձը, զարգացնել տրամաբանական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակություններ, ակտիվացնում է մտածական գործընթացները։

Գրականությունն այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը։ Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում։ Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը։

Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել գրական տեքստը։ Այլ խոսքով՝ նրանք պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի «նկարած» կյանք, ապրել այն որպես իրողություն, ապրումակցել հերոսներին, համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ և հասկանալ հեղինակի գաղափարները։

Հարց է ծագում. դասի ընթացքում ինչպե՞ս աշխատել, որպեսզի սովորողները դպրոցից հետո ևս, ցանկություն ունենան ընթերցել հայ և համաշխարհային գրականության հրաշալի ստեղծագործությունները, որոնց դաստիարակչական նշանակությունն աներկբա է։

Ընթերցանության դասաժամերին սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների գրական ստեղծագործությունը խորությամբ վերլուծելու կարողությունն է։

Առաջարկություններ

Կրտսեր դպրոցականին պետք է սովորեցնել պարզ ու հստակ շարադրել սեփական մտքերը, համապատասխան բառերով արտահայտել իր հույզերն ու ապրումները, դրսևորել խոսքի մշակույթ և հաղորդակցվել, վերարտադրել տեքստի բովանդակությունը, ընտրել արդյունավետ միջոցներ ու մեթոդներ, պատրաստել ճիշտ հարցադրումներ՝ ըստ պատմվածքի հաջորդականության, կազմել տեքստի բովանդակության պլան։

Ուսումնական ծրագրերը պետք է լինեն այնքան ճկուն, որ ուսուցիչը կարողանա ուսուցանվող նյութը և առաջադրաքները մատչելի և հասանելի դարձնել բոլոր սովորողների համար՝ հաշվի առնելով նրանց զարգացման առանձնահատկությունները, անհատական կարողությունները, նախասիրությունները, հետաքրքրությունները։

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ. Հ. «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա»
2. Տեր-Գրիգորյան Ա. Ե. «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա»
3. Աբրահամյան Ս.Գ. «Աշակերտի խոսքի զարգացումը»
4. Աղայան Է. «Լեզվաբանության ներածություն»
5. Էդիլյան Գ. «Ձեռագրի ուսուցման մեթոդիկա»
6. Տեր-Գրիգորյան Ա.Ե. «Ուսուցումը առաջին դասարանում»
7. Մեթոդական ձեռնարկ «Ինչպես խթանել ներառումը դասարանում»